

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Դ. Մեր էժանագին զբաղարանը № 7 Մ. ՄԵՐԸՕ Մանկան մօտ: Վերջին խօսք. էջ 88.

Գրքոյկիս մէջ ամփոփուած երկու պատմութիւններն էլ միա-
նման բովանդակութիւն ունին. մէկը — «Մանկան մօտ» — տաժա-
նակիր աշխատանքի դատապարտուած ոճրագործերի կեանքից է
վերցրած, միւսը — Վերջին խօսք» — բանտարկուածների կեանքից:
Առաջինը թոյլ և որոշ հոգեբանական ամբողջութիւն չունեցող
գրուածք է, իսկ երկրորդն, ընդհակառակը, ընթերցողին բաւա-
կանին խորհրդածութեան նիւթ է տալիս: «Մանկան մօտը»
խալական կեանքից է, իսկ «Վերջին խօսքը» ֆրանսիական.
սակայն գրքոյկի վրայ չէ նշանակուած թէ ինչ լեզուից են թարգ-
մանուած՝ բնագրերից թէ դրանց ուսեւերէն թարգմանութիւննե-
րից. չէ գրուած նոյն իսկ, որ երկուսն էլ թարգմանութիւն են.
այս տգեղ սովորութեան հետեիլը վայել չէ մայրաքաղաքի «Ըժա-
նագին զբաղարանին»: Աչքի է ընկնում նոյնպէս, որ «մեր էժա-
նագին զբաղարանի» հրատարակութիւնները աքտաբուստ գեղե-
ցիկ, լաւ թղթի վրայ և մաքուր են տպագրուում, բայց շատ վատ
են սրբագրուում և մեծ քանակութեամբ տպագրական սխալներ են
պարունակում: Լեզուի թերութիւններն էլ երբեմն անհասկանալի
են դարձնում նախադասութեան միտքը. արդեօք ինչ է նշանա-
կում. «պահապանները նոյն խորքով ավի եկան, ինչպէս նստել
էին». (էջ 9): «Մունկ չոքած՝ դատապարտեալի աչքերին (?)
տարբերին» նա սկսեց մի երկաթէ օղ յարմարցընել (յարմա-
րեցնել). (էջ 12): «Բարի անձնաքաց (?) եւ սիրող կին լի-
նելով». (էջ 19): «...նա յենում էր սայլակին կոթին» (?). (էջ
20): «Ազատ ժամանակ դրանով էր հա (?) աշխատում. խրած
քաները (?) ջրից հանում էր»: (էջ 31 - 32): Այդ ժամանակուա-
նից Ռօկկօն անքաժան (?) կանգնած էր տան առաջ»: (էջ 41):
«Բանտում ամբողջ գիշերը նրան խցի մէջ փակած էին պահում,
իսկ ցերեկին (?) ստիպում էին արհեստանոցում աշխատել —
(էջ 54) «Զնայելով երիտասարդ հասակին՝ արդէն կնճիռներով

ծածկուած ըարժը նակատ, խիտ, սեւ մազեր, քիչ-քիչ ըս-
պիտակած»։ (?) (էջ 58)։ «Դադափարներ ունեցող մարդկան» (?)
մտքրէք... կը դիմեն նշան, կաստուածացեան նրան. (էջ 59)։
«Սեւ այդ լուրջ տեսարաններին անձնատես» (?) *եղօղների հա-*
մար ... (էջ 67)։ «Սրբ կառավարիչն իր սովորական այցիւն էր
եկել...» (էջ 68)։ «Այնտեղ նրա խղճով ակրողութիւնն» (?) էր
պահած» (էջ 70)։ «Յետոյ նա բոլորի հետ համբուրուեց, ըստ
որում» (?) մի քանիսն արտասուեցին» (էջ 75)։ «Նա տրեց զայ-
նոյթի զգացմունքին» (?) էջ 83. և այլն։

Միթէ Պետերբուրգում կանոնաւոր հայերէն իյացող մի հայ
չկայ, որ օգնութեան հասնէ Տիկին Զաբելի հրատարակած *«մեր
էժանագին զրադարանին»*։

1. Ա-ԴՅ Հայրենիքի կարօտը. էջ. 12. Ս. Պետերբուրգ 1905.

Գրքոյկիս նիւթը շատ հին և շատ անգամ է ծամծմուած.
հայ գաղթականի վիճակը հայրենիքից դուրս և նրա հայրենեաց
կարօտն է նկարագրում հեղինակը։ «Հայրենիքի կարօտը», իբրև
գեղարուեստական գրուածք շատ թոյլ է և արժէք չունի, իսկ
իբրև թեթև ընթերցանութեան նիւթ օգտակար կարող է լինել
ժողովրդի համար։ Լեզուն ընդհանրապէս պարզ է, բայց պատա-
հում են անկանոն ոճեր, օրինակ. «գեղջկական այս համերգի մի-
ջոցին վերադառնում է Մուրադը զոյգ եզները առաջը արած
նրանց լծից քարշ ընկած արօրը»։ (էջ 5) «...հայացքը (հա-
յեացք) ձգելով խոնաւ նկուղու (շկուղի) առաստաղին մի (?)
սառը օդ անցաւ նրա դէմքի վրայով» (էջ 6)։ «Ինչպէս այդ բո-
ւայէին գետինը չ'պատուից (որ) նրան կու տար, մի կայծակ նրան
մոխիր չ'դարձրեց» (էջ 8) և այլն։ Շատ տեղ սխալ է գործա-
ծուած ը որոշեալ յօդք. «...նա գլորվեց փալասի կտորի վրա, որ-
պէս փայտը և անշարժ մնաց» (էջ 4) «իսկ այսօր նա կարօտ.
մի կտոր չոր հացի հալածվում էր որպէս աներես մուրացկանը»
(էջ 8)։ «...նա նոյնպէս արտասովեց, նոյնպէս հեկեկաց, որպէս մա-
նուկը» (էջ 10) և այլն։ Տառասխալներ. նոյնպէս շատ կան, բայց
սրանք կարող են տպագրական սխալներ լինել. աւելի խնամ-
քով պէտք է սրբագրել. որոշ ուղղագրական կանոններ չեն պահ-
պանուած. օրինակ *«վրա», «այդ օրվայ»* և այլն։

ԲՐԻԶ